

ՏԵՂԵԿԱԳԻՐ Ս. ԱԹՈՌՈՅՍ

ԺԱՌԱՆԳԱՌՈՐԱՑ ՎԱՐԺԱՐԱՆԻ ԵՒ ԸՆԾԱՅԱՐԱՆԻ

1952 — 1953

Ստաբլ, փոքր յապաւումներով, կը ներկայացնեն Ս. Աթոռոյ ժառանգ. Վարժարանի եւ Ընծայարանի ամսական մեջնակապաշխութեան հանդէսին առթիւ, Վարժարանի Տեսուչ՝ Նոգ. Տ. Հայկազուն Վրդ. Աթոռամանին կողմէ կարգադրուած միամեայ գործունէութեան տեղեկագիրը:

Գերադասի Տեղապահ Մերազան Հայր,
 Հոգեւոր Հայրեր
 եւ Յարգելի Հանդիսականներ

Ժառանգաւորաց Վարժարանն ու Ընծայարանը բոլորած իր կրթական 1952-1953 տարեշրջը լանը, իր պաշտօնէութեամբ եւ աշակերտութեամբ կուգայ այսօր իր խորին շնորհակալութիւնները յայտնել Ձերդ Ամենապատուութեան եւ Սուրբ Աթոռոյ Պատ. Վարդութեան, այն խնամքին ու հոգածութեանը համար, զոր չխնայեցիք Վարժարանին եւ Ընծայարանին յառաջիկանութեան, մեր այս շատ նեղ օրերուն մէջ մասնաւոր:

Այն գործը որուն զուրկը կը գտնուիմ անաթաւաբար մէկ տարիէ ի վեր իբրեւ Տեսուչ, շատ փափուկ գործ մըն է, եւ կապուած մեզի յանձնուած մատաղ հոգիներուն, որուն պատառիւնատուութիւնը կը զգամ ամէն վայրկեան: Այս կրթարանը իր կրկնակ երեւոյթովը, կրօնական եւ Ազգային, ներկայ Հայ սփիւռքին մէջ ամենէն քերթական մէկ Հաստատութիւնն է: Անկէ ամենեցուն ի քեզ յուսանէ կըսէ Սոցիալաբեզուն: Ու արտասանմանի մեր հոգեկան ծարաւը ունեցող Ժողովուրդը, մեզի, Սիրնի բարձունքին յառած է իր աշէքը: Այս Հաստատութիւնը իր հարեւր եւ տառ տարուան կեանքովը այսօրէն գրեթէ անընդհատ, կրօնաւած է Հայ Հոգիի ու Ժողով այդ գերագոյն պակասը լեցնելուն: Անցնող՝ ինչպէս են ներկայ դարուն, եւ նայնիսկ մեր օրերուն մէջ այլ, Սփիւռքի մէջ պաշտօնավարող հոգեւորականներուն եւ աշխարհականներուն ներկայ հայրը չաղափելի փաստ մըն է եւ փառքն այս դարաւոր Հաստատութեան, որուն կատարած գործը ամէն խօսքէ վեր է:

Հո՞ւ, այս Սուրբ Տանը մէջ է որ պիտի գարնուի մաքուր Հոգին մեր Երանելի նախնիքներուն, որոնք հաստատուիմ պահպանները պէտք է ըլլան ամէն անեւը որ կը վայելի Առտուած մեզի տրուած այս պարգեւները: Երուսաղէմը, մանաւանդ Հայ Սրուսաղէմը, իր Սրբավայրերովն ու զանազան Հաստատութիւններովը, օւխտեալ աւանդապահներու բացառութիւն մը պէտք է ըլլայ, որիւր օրեւէ տեղէ աւելի շնորհքի Սիւնէն ելցնէ կ'ըսէ Ս. Գրիգոր. ու աօրկա առական մակդիր մը չէ որ փակցուած է անոր

հակոխ: Տարիները որոնց առջին կեցած ենք, կը բազմապատկեն իրենց պէտքերն ու պահանջները այս կրթական Հաստատութեան հանդէպ, մասնաւորաբար անոր հոգեկան եւ իմացական մարզին մէջ, որոնք պէտք չէ բնաւ տկարանան կամ նուազին ժամանակի ընթացքին:

Ժառանգաւորաց Վարժարանը անցնող շրջանին ունեցաւ իր շատ փայլուն վերելքը, միայն մեր այս քանի մը տարիներուն է որ սկսած է այդ շատ պայծառ կանխելը պրոպագանդայի, Բայց վրտան ենք թէ մեր հղոր պաշտպան Սուրբը, Ս. Վրդապիւր, միշտ ի շինութեան եւ ի պայծառութեան պիտի պահէ այս Սուրբ Տանը, որուն վրայէն գարեբու ընթացքին շատ անցած են մտք մտպիւր:

Ձեր նախորդները, Սրբազան Հայր, ըրին ինչ որ կարելի եղաւ ընել, կրթական մեր այս Հաստատութեան համար: Անոնց ճշմարիտ շարունակողն էք Դուք, եւ Ձեր բաժինը շատ համեմատ չնչաւ այս մարզին մէջ: Ձեր կրթանութիւնը գործունէութիւնը երկարատեւ տարիներու վրայ, մանաւանդ իբրեւ առաւել այս վարժարանին, աւելի քան երաշխիք մըն է հետզհետէ աճող ներկայ պահանջներուն վրայ: Քաղցր է ինծի այս վայրկեանին յուսով թէ այս մասին Ձերդ Գերաշնորհութիւնը մեր բոլորէն աւելի նախաձեռնիքը հոգիով մը պիտի գիմաւորէ պահանջներ, եւ իր իմաստուն ու Հայրական զեկավարութեամբ պիտի առաջնորդէ Վարժարանն իրեն սահմանուած դերին եւ իր իստիկին իրագործման համարուն մէջ:

Նոր շինուող տուն մը որ օր աւուր կ'անի, արդիւնքն է իր անխնայ գործունէութեան հանրի մաքուր քրտինքին: Այս Հաստատութեան կանոնաւոր ընթացքն այլ շատ բան կը պարտի իր բնութեանը զանազան կողմերէ կապին: Այս յիշատակելի օրուան առթիւ չեմ կրնար ես իմ սրտի գտնուանկութիւնն եւ շնորհակալութիւնն յայտնել Վարժարանի առաջնական կազմին, որոնք զուրկը կը գտնուի Ձերդ Սրբազնութիւնը: Շնորհակալ եմ բոլոր անոնց որոնք նախանձախնայի հոգիով կ'աշխատեն այս Հաստատութեան վերակին համար: Իմ գերաշնորհ, հոգեւոր, բարեկեցիկ եւ սիրելի պաշտօնակիցներուն կը պարտիմ Մրցանակաբաշխութեան այս հանդէսը, ուր կը քաջակերուին աշխատասէր տղաք:

Զեորհակալութեան պարտք մը ունիմ մասնաւորաբար Բարեշնորհ Տիրացուն Գեորգ Ասազ Սարկաւադին, որ հակառակ իր դասերով ըզբաղուած ըլլալուն կատարեց նաև Փոխ-Տեսչի պատասխանատու պաշտօնը այնքան ծաննհատօրէն, եղաւ միշտ անոնց հետ յեկեղեցւոյ և ի տան:

Ա. Կոմակլան կամ Եկեղեցական.— Ժառանգաւորաց վարժարանի աշակերտները և Ընծա-յարանի Սարկաւադները անխափան կատարե-լին իրենց կրօնական պարտականութիւնները խզիկ կատարեալ հանգարտութեամբ: Միշտ ջանք թափուեցաւ տղոց մէջ արձարծել հոգեւոր կեանքի զարգացման հոգին, որուն խնկաբայր միջո-ւորակն մէջն են ամէն օր:

Բ. Կրթական.— Անցնող տարին իր պայ-մաներուն ներքո չափովը եղաւ մեզի համար գոհացուցիչ տարի մը: Բոլոր դասաւանդութիւն-ները եղան ըստ կրթական ծրագրի, և կարելի է ըսիլ գրեթէ առանց թերացումի: Մասնաւոր հիշ թափուեցաւ զարգացել արարեղէն և անգ-ղերէն լեզուները: Վերի երկու դասարաններուն տուեցաւ անգղերէն դասագրքերու բարձրա-գոյնները — լեզուներու, պատմութեան և թուա-գիտութեանց — անգղերէն լեզուով, որոնք հա-մապատասխան են երկրորդական վարժարաննե-րու բարձրագոյն դասարաններու զործածած գառադիքերուն: Հոս տեղն է յիշել թէ տար-ւաւս ընթացքին ինչպէս նաեւ քննութեանց արդիւնքէն դատելով վարժարանիւ երրորդ դա-սարանի աշակերտները եղած են լաւագոյն և լաւ չափանիշերով: Երկրորդ դասարանի աշա-կերտներէն մին քաջալաւ միւսները լաւագոյն և գոհացուցիչ չափանիշերով: Առաջին դասա-րանի փոքրիկները եղած են լաւագոյն, իսկ և գոհացուցիչ չափանիշով: Տարեկան աւժանց և ընդհանուր քննութեանց ընդհանուր միջինը ե-ղած է ամենեւնի տկարիւր գրեթէ եօթը, իսկ բարձրագոյնը 9.30:

Գ. Մարզական.— Առողջ միտք առողջ մար-մնի մէջ ըստուած է շատ իրաւամբ: Այս մտօք վարժարանի մարզանքի ուսուցիչը՝ Պրն. Մովսէս Ճաւոյեան, աշակերտութիւնը բաժնած է երկու խումբերու, կաւմիք և կամայ: Անոնք ու-նեցած են իրենց միջ-խմբական խաղերը իրարու հետ, միշտ պահելով մարզական օգին: Վարժա-րանի ֆուտբոլի առակն խումբը ունեցած է 14 հանգիստութեան օտար խումբերու դէմ, որոն-ցմէ 12ին մէջ յաղթող հանգիստացած է, մէկը հաւասար և մէկը պարտուած: Պատկէթ-պօլի ա-ռաջին խումբը ունեցած է վեց հանգիստութեան, երեքը յաղթած և երեքը պարտուած: Վոյելպօլի առաջին խումբը ունեցած է երկու հանգիստութե-ան, մին յաղթած և միւսը պարտուած: Փինկ-փօնկի մրցումը չէր ունեցած օտար խումբերու հետ:

Այսօրուան բաժնուած մետալները աշըն-ւօրէն կը նուիրէ Պր. Գրիգոր Մամեան, գնա-

կատելի աշխատութեամբը Պր. Վարդան Տէր Վարդանեանի: Նոյնպէս ժառանգաւոր սաներու գլխաւորներու վրայ եղող փշ-ը կը նուիրէ Պր. Գրիգոր Մամեան: Իսկ Ռազգայէն (Սուրբա), նախկին ժառանգաւոր Պրն. Տիրան Թաշեան կը նուիրէ 12 հատ նոր կարմիր Զօթյօյի չափի-կներ: Այս ամենուն կը յայտնեմ իմ և աղոյց կողմէ սրտագին շնորհակալութիւններ:

Գ. Առողջապահական.— Գոհութիւն Առաւու-ծոյ, անցնող տարուան ընթացքին չենք ունե-ցած մտահոգիչ հիւանդութիւններ վարժարանէն ներս: Պատահած են փոքր անհանգստութիւններ և վերքեր, որոնք չուտով ապաքինած են:

Ե. Աւակներստիք և Ուսուցական կազմ.— Անցնող տարուան Հոգեւորմիջին ունեցանք վեց նոր աշակերտներ լիբանանէն և Սուրիայէն և մէկ հատ ալ Բեկդէիէն, անոնցմէ մէկը դրուեցաւ երկրորդ դասարան իսկ միւսները կազմեցին ա-ռաջին դասարանը նախորդ տարուան կրկնող-ներուն հետ: Դասարանները կազմուած են հե-տևեալ կերպով:

Ընծայարան երկրորդ	3	աշակերտներով
Վարժարան երրորդ	3	աշակերտներով
» երկրորդ	7	»
» Առաջին	9	»

Ընծ. և Ժուգ. վերին. 22 աշակերտներով

Իսկ Ուսուցական կազմը բաղկացած է հե-տևեալներէն.

- Ի. Զեբը Բարձր Սրբազնութիւնը
 2. Գեբ. Տ. Նորայր Սրբազն
 3. Հոգ. Տ. Հայկազուն Վրդ. (Տեսուչ)
 4. Հոգ. Տ. Զուէն Արդ.
 5. Հոգ. Տ. Անուշաւան Արդ.
 6. Հոգ. Տ. Վարուժան Արդ.
 7. Հոգ. Տ. Գրիգոր Արդ.
 8. Հոգ. Տ. Օշահան Արդ.
 9. Վեբ. Էվլերի (Անգլիացի երէց)
 10. Բար. Սիմոն Սրկ. Սլաւեան
 11. Բար. Վահան Սրկ. Գալֆայեան
 12. Բար. Գեորգ Սրկ. Գրգորեան (Փոխ Տեսուչ)
 13. Տիրա Մովսէս Ժաւոյեան
 14. Տիրա Պիշարա Տէպլինի (Արար)
 15. Տիրա Խաչատուր Խաչատուրեան

Նուէրներ պիտի տանան տարուան ընթաց-քին երեք դասարաններէն առաջին և երկրորդ հանգիստացողները միայն, իսկ երրորդ ելլողը միայն կը յիշատակուի:

Նոյնպէս նուէր կը տանան երեք դասարան-ներէն առաջինի քննութեանց մէջ առաջին և երկրորդ հանգիստացողները, իսկ երրորդը միայն կը յիշատակուի:

Նուէրներ կը տանան լեզուական, պատմա-կան և թուագիտական հիւղերուն մէջ միայն առաջին ելլողները: Լեզուներէ՝ հայերէն, անգլ-լերէն, արաբերէն և ֆրանսերէն, որոնց ամենուն

ընդհանուր միջինը ամենաբարձրն է: Պատմական՝ Պատմության շաղկապ, Եկեղեցու, Ընդհ. Ազգայն. Փրկարանական և Ս. Գրական. Առնչ. ամենուրեք միջինին բարձրագույնը: Թուրքական կամ՝ թուրքականություն, գրքական և երկրաչափական, առնչ. միջիններուն ընդհանուր գումարին բարձրագույնը:

Նույնը պիտի ստանայ նաև վարքի մէջ պատշաճ հանդիսացողը:

Զ. Պարզամտականութիւն եւ մեղաւարձութիւն. — Բնութիւնը նախնաւոր և գեղեցիկին հաշակը զարգացնելու մտքը, վարժարանէն ներս մասնաւոր զարկ տրուած է նաև պարտիզամշակութեան, գլխաւորութեամբ Փոխ-Տեսուչ Բարեշնորհ Գեորգ Աւագ Սարկաւագ Գրգորեանի: Պարտիզին ածնանքը բաժնուած են սղոց գրեթէ հաւասարապէս, և իւրաքանչիւրը պատասխանատու է իր պարտիզի բարձր զարգացման և մաքրութեան: Այս մարտի մէջ մասնաւոր ուրիշ, եռանդ և աշխատանք թափած է ու կը թափէ Տիրացու Գեորգ Սրկ., աւելնէն աւելի նախաձառնողներն աշխատելով, Տեսութեան կողմէ կ'արժանանայ մասնաւոր մրցանակի: Նշնպէս մեր ձեռքին ուրարակիր Արամ պապա Սէրայտարեան մասնաւոր հաջածութիւն ցոյց կուտայ մեղաւանդի հանդէպ, և արժանի է մեր շնորհակալութեան:

Է. Առնիք կեանք. — Վարժարանէն ներս, Փոխ-Տեսչին կարգադրութեամբ նշանակուած են ամէն ճիւղերու պատասխանատու վարիչներ: Գրադարանագետ, տնտեսագետ, խաղաղա-նապետ, շարժապետ, մաքրողներ (նիւթաւոր, տնտեսարան և գաւառաւոր), զանգակահարներ, և շնչ. Տղան անտրուան իւրաքանչիւրը կը կատարէ իր պարտականութիւնը առանց թերացումի:

Ուստի փակելով մեր այս տարւած ամսվերի հանդիսութիւնները, պիտի խնդրէ Ձերք Սրբալուծիչներն և Պատուարժան Միաբանութեանէն, որ տայիք Ձեր Հայրական օրհնութիւնները պաշտօնէութեան և ուսանողութեան, որպէս ի նշան ջաշայերուած այս օրուան խաղաղութեան, յատկապէս աւելի եռանդուն ոգիին գործի:

Ձայս յատուցանելով Ձերք Բարձր Արքայապետութեան

Մատչիմ է համարյւր Ս. Անդրէ
Թանարն աղօթակից

ՀԱՅԿԱՋԱՌԻՆ ՎՐԻ. ԱՐԱՄԱՆՍԵԱՆ
Տեսուչ Ժանգ. Վրժ. և Ընծայարարի

Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

Է Ե Ռ Ա Գ Ի Ր Ն Ե Ր

Երուսաղէմ, 2 Մայիս 1953

Սննեկապես

Ն. Վեհ. Հիւսէյն Թագաւորին Յորդանանի Աման

Կր խնդրեմք Ձերք Վսեմութեանն որ բարեհաճի հաղորդել Ն. Վ. Հիւսէյն Թագաւորին մեր ջերմ շնորհակալութիւնները եւ խորին զգացմանց հաւաստիք իր թագադրութեան բարեբասիկ օրուայ առթիւ: Կ'աղօթեմք Մրբաշէնաց մէջ իր արեւատուրեան եւ երջանկութեան ինչպէս նաեւ մեզի համար սիրելի Հաշիմական Արապական ընտանիքին՝ որ ընդմիջ օրհնուած է Տիրոջմէն:

ԵՂԻՇԷ ԱՐԲԵՊՍ. ՏԵՐՏԵՐԵԱՆ
Պատրիարքական Տեղապահ
Առաք. Ս. Արքուդյն Երուսաղէմի

Արմուհի Ամանի, 3 Մայիս 1953

Գերաւորեմ

Տ. Եղիշէ Ս. Արքեպ. Տերտերեան

Պատր. Տեղապահ Ս. Արքուդյն
Երուսաղէմ

Նորին Վեհափառութիւն Թագաւոր իր շնորհակալութիւնները կը յայտնէ Ձեզ Ձեր ազնիւ մաղթանքներուն ու շնորհակալութիւններուն համար:

Սննեկապես
Հաշիմական Պալատի

Երուսաղէմ, 2 Յունիս 1953

Բեքերպրարիի Արքեպիսկոպոս

Լոնտոն

Հանեցեք հաղորդել մեր յարգալիք եւ սրտազգած շնորհակալութիւնները Ն. Վ. Երեմիական Բ. Պապին՝ իր թագադրութեան բարեբասիկ առթիւ: Կ'աղօթեմք Մրբաշէնաց մէջ իր երկար ու երջանիկ կեանքին համար՝ ի փառս Բրիտանական ազգին եւ Կայսրութեան:

ԵՂԻՇԷ ԱՐԲԵՊՍ. ՏԵՐՏԵՐԵԱՆ
Պատրիարքական Տեղապահ
Առաք. Ս. Արքուդյն Երուսաղէմի